Հիմնական վարդապետություններ

Հիմնական վարդապետությունները պետք է շեշտվեն և սեմինարիայի, և ինստիտուտուտի դասարաններում: Ուսուցիչները պետք է օգնեն ուսանողներին գտնել, հասկանալ, հավատալ, բացատրել և կիրառել ավետարանի այդ սկզբունքները: Դա կօգնի ուսանողներին ամրացնել իրենց վկայությունները և մեծացնել Հիսուս Քրիստոսի վերականգնված ավետարանի համար իրենց երախտագիտությունը: Այս վարդապետությունների ուսումնասիրությունը կօգնի նաև ուսանողներին ավելի լավ պատրաստվել ուսուցանելու այս կարևոր ճշմարտությունները մյուսներին:

Սեմինարիաների և Կրոնի Ինստիտուտների կողմից ընտրված սուրբ գրությունների սերտման 100 հատվածների մեծ մասը նախատեսված են օգնելու ուսանողներին հասկանալ հիմնական վարդապետությունները: Ստորև թվարկված սուրբ գրությունների հղումների մեծամասնությունը վերաբերում է սուրբ գրությունների սերտման հատվածներին: Դրանք ներառվել են, որպեսզի երևա դրանց կապը հիմնական վարդապետությունների հետ:

1. Աստվածագլուխ

Աստվածագլխում կան երեք առանձին անձնավորություններ. Աստված՝ Երկնային Հայրը, Նրա Որդի՝ Հիսուս Քրիստոսը և Սուրբ Հոգին (տես Ջոզեֆ Սմիթ—Պատմություն 1.15–20)։ Հայրը և Որդին ունեն շոշափելի մարմիններ՝ ոսկորներից և մսից, իսկ Սուրբ Հոգին հոգեղեն անձնավորություն է (տես ՎևՈւ 130.22–23)։ Նրանք մեկ են նպատակի և վարդապետության մեջ։ Նրանք կատարելապես միավորված են Երկնային Հոր փրկության աստվածային ծրագիրը իրականացնելու գործում։

Հայր Աստված

Հայր Աստվածը տիեզերքի Գերագույն Կառավարիչն է։ Նա մեր հոգիների Հայրն է (տես Եբրայեցիս 12.9)։ Նա կատարյալ է, ունի ողջ զորությունը և գիտի բոլոր բաները։ Նա նաև կատարյալ ողորմածության, բարության և գթության Աստված է։

Հիսուս Քրիստոս

Հիսուս Քրիստոսը Հոր Առաջնեկն է հոգով և Միածինը՝ մարմնով։ Նա Հին Կտակարանի Եհովան է և Նոր Կտակարանի Մեսիան։

Հիսուս Քրիստոսն ապրել է առանց մեղքի կյանք և կատարյալ Քավություն է իրականացրել ամբողջ մարդկության մեղքերի համար (տես Ալմա 7.11–13)։ Նրա կյանքը ապրելաձևի կատարյալ օրինակ է, թե ինչպես պետք է մարդիկ ապրեն (տես Հովհաննես 14.6; 3 Նեփի 12.48)։ Նա առաջին անձն էր երկրի վրա, ով հարություն առավ (տես Ա Կորնթացիս 15.20-22)։ Հիսուս Քրիստոսը կրկին կգա զորությամբ և փառքով, և կթագավորի երկրի վրա Հազարամյակի ժամանակ։

Բոլոր աղոթքները, օրհնությունները և քահանայության ծեսերը պետք է արվեն Հիսուս Քրիստոսի անունով (տես 3 Նեփի 18.15, 20–21)։

Առնչվող հղումներ. Հելաման 5.12; ՎևՈւ 19.23; ՎևՈւ 76.22–24

Սուրբ Հոգի

Սուրբ Հոգին Աստվածագլխի երրորդ անդամն է։ Նա հոգեղեն էակ է՝ առանց ոսկորից և մսից մարմնի։ Նրան հաճախ անվանում են Հոգի, Սուրբ Հոգի, Աստծո Հոգի, Տիրոջ Հոգի և Մխիթարիչ։

Սուրբ Հոգին վկայություն է տալիս Հոր և Որդու մասին, հայտնում բոլոր բաների ճշմարտությունը և սրբագործում նրանց, ովքեր ապաշխարում են և մկրտվում (տես Մորոնի 10.4-5)։

Առնչվող հղումներ. Գաղատացիս 5.22–23; ՎևՈւ 8.2–3

2. Փրկության Ծրագիր

Նախաերկրային կյանքում Երկնային Հայրը ներկայացրեց մի ծրագիր, որը հնարավորություն է տալիս մեզ դառնալ Նրա նման և ձեռք բերել անմահություն և հավերժական կյանք (տես Մովսես 1.39)։ Սուրբ գրություններում այդ ծրագիրը անվանվում է փրկության ծրագիր, երջանկության մեծ ծրագիր, փրկագնման ծրագիր և ողորմածության ծրագիր։

Փրկության ծրագիրը ընդգրկում է Արարումը, Անկումը, Հիսուս Քրիստոսի Քավությունը և ավետարանի բոլոր օրենքները, ծեսերը և վարդապետությունները։ Կամքի բարոյական ազատությունը, որը ինքնուրույն ընտրելու և գործելու ընդունակություն է, նույնպես կարևոր դեր ունի Երկնային Հոր ծրագրում (տես 2 Նեփի 2.27)։ Այդ ծրագրի շնորհիվ մենք կարող ենք կատարելագործվել Քավության միջոցով, ստանալ ուրախության լիություն և հավերժ ապրել Աստծո ներկայության մեջ (տես 3 Նեփի 12.48)։ Ընտանեկան մեր կապերը կարող են տևել հավերժ։

Առնչվող հղումներ.Հովհաննես 17.3; ՎևՈւ 58.27

Նախաերկրային կյանք

Երկրի վրա ծնվելուց առաջ, մենք ապրում էինք մեր Երկնային Հոր ներկայության մեջ որպես նրա հոգևոր զավակները (տես Աբրահամ 3.22–23)։ Այդ նախաերկրային կյանքում մենք մասնակցեցինք Երկնային Հոր և հոգևոր մյուս զավակների հետ խորհրդում, որի ժամանակ Երկնային Հայրը ներկայացրեց Իր ծրագիրը և նախաերկրային Հիսուս Քրիստոսը Փրկիչը լինելու ուխտ կապեց։

Մենք, օգտագործելով մեր ազատ ընտրությունը, հետևեցինք Երկնային Հոր ծրագրին։ Մենք պատրաստվեցինք գալ երկիր, որտեղ կարող էինք շարունակել զարգանալ։

Ովքեր հետևեցին Երկնային Հորը և Հիսուս Քրիստոսին, թույլտվություն ստացան գալու երկիր, ապրելու մահկանացու կյանք և զարգանալու՝ հավերժական կյանք ստանալու համար։ Լյուցիֆերը՝ Աստծո հոգևոր զավակներից մեկը, ապստամբեց այդ ծրագրի դեմ։ Նա դարձավ Սատանա և իր հետևորդների հետ միասին վտարվեց երկնքից և զրկվեց ֆիզիկական մարմին և մահկանացու կյանք ունենալու արտոնությունից։

Առնչվող հղում.Երեմիա 1.4-5

Արարում

Հիսուս Քրիստոսը ստեղծել է երկինքը և երկիրը Հոր ղեկավարության ներքո։ Երկիրը չի արարվել ոչնչից. այն կազմակերպվել է գոյություն ունեցող նյութից։

Հիսուս Քրիստոսը ստեղծել է անհամար աշխարհներ (տես ՎևՈւ 76.22–24):

Երկրի Արարումը էական դեր է խաղում Աստծո ծրագրում: Այն վայր է, որտեղ մենք պետք է ստանայինք մեր ֆիզիկական մարմինը, փորձվեինք և զարգացնեինք աստվածային հատկություններ:

Մենք պետք է օգտագործենք երկրի ռեսուրսները իմաստությամբ, խելամտությամբ և երախտագիտությամբ (տես ՎևՈւ 78.19):

Ադամը երկրի վրա ստեղծված առաջին տղամարդն է: Աստված ստեղծեց Ադամին և Եվային Իր պատկերով: Բոլոր մարդկային էակները՝ տղամարդիկ և կանայք, ստեղծված են Աստծո պատկերով (տես Ծննդոց 1.26–27):

Անկում

Եդեմի Այգում Աստված Ադամին և Եվային պատվիրեց չճաշակել բարու և չարի գիտելիքի ծառի պտղից. դրա հետևանքը կլիներ հոգևոր և ֆիզիկական մահը: Հոգևոր մահը բաժանումն է Աստծուց: Ֆիզիկական մահը հոգու բաժանումն է մահկանացու մարմնից: Քանի որ Ադամը և Եվան խախտեցին Աստծո պատվիրանը, նրանք դուրս վտարվեցին Նրա ներկայությունից և դարձան մահկանացու: Ադամի և Եվայի մեղսագործությունը և արդյունքում կատարված փոփոխությունները, որոնց նրանք ենթարկվեցին, ներառյալ հոգևոր և ֆիզիկական մահը, կոչվում է Անկում:

Անկման արդյունքում Ադամը և Եվան ու նրանց սերունդները կարող էին ունենալ ուրախություն և վիշտ, տարբերել բարին չարից, և զավակներ ունենալ (տես 2 Նեփի 2.25): Որպես Ադամի և Եվայի հետնորդներ՝ մենք ժառանգում ենք ընկած վիճակը մահկանացու կյանքում: Մենք բաժանված ենք Տիրոջ ներկայությունից և ենթակա ենք ֆիզիկական մահվան: Մենք նաև փորձվում ենք կյանքի դժվարությունների և հակառակորդի գայթակղությունների միջոցով: (Տես Մոսիա 3.19:)

Անկումը Երկնային Հոր փրկության ծրագրի անբաժանելի մասն է: Այն երկակի ուղղություն ունի՝ դեպի ցած, այնուամենայնիվ, դեպի առաջ: Ֆիզիկական և հոգևոր մահը առաջ բերելուց բացի, այն մեզ հնարավորություն է տվել ծնվել երկրի վրա, սովորել և զարգանալ:

Մահկանացու կյանք

Մահկանացու կյանքը սովորելու ժամանակաշրջան է, երբ մենք կարող ենք պատրաստվել հավերժական կյանքին և ապացուցել, որ կօգտագործենք մեր ազատ կամքը անելու համար այն ամենը, ինչ պատվիրում է Տերը: Այս մահկանացու կյանքի ընթացքում մենք պետք է սիրենք և ծառայենք մյուսներին (տես Մոսիա 2.17; Մորոնի 7.45, 47–48):

Մահկանացու կյանքում մեր հոգիները միավորված են մեր ֆիզիկական մարմինների հետ, տալով մեզ հնարավորություններ աճելու և զարգանալու այնպես, ինչպես հնարավոր չէր նախաերկրային կյանքում: Մեր մարմինները փրկության ծրագրի կարևոր մասն են և պետք է դիտարկվեն որպես պարգև մեր Երկնային Հոր կողմից (տես Ա Կորնթացիս 6.19–20):

Առնչվող հղումներ. Հեսու 24.15; Մատթեոս 22.36–39; 2 Նեփի 28.7–9; Ալմա 41.10; ՎևՈւ 58.27

Կյանք մահից հետո

Երբ մենք մահանում ենք, մեր հոգիները ընկնում են հոգևոր աշխարհ և սպասում Հարությանը: Արդարների հոգիները հայտնվում են երջանկության վիճակի մեջ, որը կոչվում է դրախտ: Շատ հավատարիմներ կքարոզեն ավետարանը նրանց, ովքեր հայտնվել են հոգևոր բանտում:

Հոգևոր բանտը ժամանակավոր վայր է հետմահկանացու աշխարհում նրանց համար, ովքեր մահացել են առանց ճշմարտության գիտելիքը ստանալու կամ ովքեր անհնազանդ են եղել մահկանացու կյանքում: Այնտեղ հոգիներին ուսուցանվում է ավետարանը և նրանք հնարավորություն են ստանում ապաշխարելու և ընդունելու փրկության արարողությունները, որոնք կատարվել են իրենց համար տաճարներում (տես Ա Պետրոս 4.6): Նրանք, ովքեր ընդունում են ավետարանը, մինչև Հարությունը կարող են բնակվել դրախտում:

Հարությունը մեր հոգևոր մարմնի և մսից ու ոսկորից կազմված մեր ֆիզիկական մարմնի վերամիավորումն է (տես Ղուկաս 24.36–39): Հարությունից հետո հոգին և մարմինը այլևս երբեք չեն բաժանվում և դառնում են անմահ: Երկրի վրա ծնված ցանկացած անձ հարություն կառնի, որովհետև Հիսուս Քրիստոսը հաղթահարել է մահը (տես Ա Կորնթացիս 15.20–22): Արդարները հարություն կառնեն ամբարիշտներից առաջ և առաջ կգան Առաջին Հարության ժամանակ:

Վերջին Դատաստանը տեղի կունենա Հարությունից հետո: Հիսուս Քրիստոսը կդատի յուրաքանչյուր անձի և կորոշի, թե ինչ հավերժական փառքի կարժանանա տվյալ անձը: Այդ դատաստանը հիմնված կլինի Աստծո պատվիրաններին յուրաքանչյուր անձի հնազանդության վրա (տես Հայտնություն 20.12–13; Մոսիա 4.30):

Կան փառքի երեք արքայություններ (տես Ա Կորնթացիս 15.40–42): Դրանցից ամենաբարձրը սելեստիալ արքայությունն է: Նրանք, ովքեր անվեհեր են Հիսուսի մասին իրենց վկայության մեջ և հնազանդ են ավետերանի սկզբունքներին, կբնակվեն

սելեստիալ արքայությունում՝ Հայր Աստծո և Նրա Որդի՝ Հիսուս Քրիստոսի ներկայության մեջ (տես ՎԱՈ 131.1–4)։

Երեք արքայություններից երկրորդը թերեստրիալ արքայությունն է։ Այդ արքայությունում գտնվողները կլինեն երկրի պատվելի տղամարդիկ և կանայք, ովքեր անվեհեր չէին Հիսուսի վկայության մեջ։

Թելեստիալ արքայությունը փառքի երեք արքայություններից ամենացածրն է։ Այս արքայությունը ժառանգողները կլինեն նրանք, ովքեր իրենց մահկանացու կյանքում ընտրել են ոչ թե արդարությունը, այլ ամբարշտությունը։ Այդ մարդիկ կստանան իրենց փառքը հոգևոր բանտից փրկագնվելուց հետո։

Առնչվող հղում. Հովհաննես 17.3

3. Հիսուս Քրիստոսի Քավությունը

Քավել նշանակում է կրել մեղքի պատժի տառապանքները, դրանով վերացնելով մեղքի հետևանքները ապաշխարող մեղսավորի վրայից և թույլ տալով նրան հաշտվել Աստծո հետ։ Հիսուս Քրիստոսը միակն էր, ով ունակ էր ողջ մարդկության համար կատարյալ քավություն կատարել։ Նրա Քավությունը ընդգրկում էր մարդկության մեղքերի համար տանջվելը Գեթսեմանի Պարտեզում, արյուն թափելը, տանջվելը և մահանալը խաչի վրա և գերեզմանից Հարություն առնելը (տես Ղուկաս 24.36–39; ՎԱՈ 19.16–19)։ Փրկիչը կարող էր իրականացնել Քավությունը, որովհետև Նա Իրեն ազատ էր պահել մեղքից և զորություն ուներ մահվան վրա։ Իր մահկանացու մորից Նա ժառանգել էր մահանալու ունակությունը։ Իր անմահ Հորից Նա ժառանգել էր Իր կյանքը կրկին ետ ստանալու զորությունը։

Շնորհի միջոցով, որը հնարավոր դարձավ Փրկչի քավող զոհաբերությամբ, բոլոր մարդիկ հարություն կառնեն և կստանան անմահություն։ Հիսուս Քրիստոսի Քավությունը նաև հնարավոր է դարձնում մեզ համար ստանալ հավերժական կյանք (տես Մորոնի 7.41)։ Այդ պարգևը ստանալու համար մենք պետք է ապրենք Հիսուս Քրիստոսի ավետարանով, որը ներառում է՝ Նրա հանդեպ հավատք ունենալը, մեր մեղքերից ապաշխարելը, մկրտվելը, Սուրբ Հոգու պարգևը ստանալը և մինչև վերջ հավատքով համբերելը (տես Հովհաննես 3.5)։

Որպես Իր Քավության մաս, Հիսուս Քրիստոսը ոչ միայն տառապեց մեր մեղքերի համար, այլ նաև Իր վրա վերցրեց բոլոր մարդկանց ցավերը, հիվանդությունները և թուլությունները (տես Ալմա 7.11–13)։ Նա ընկալում է մեր տառապանքները, որովհետև զգացել է դրանք։ Նրա շնորհը, կամ հնարավոր դարձնող զորությունը, ամրացնում է մեզ, որ կարողանանք կրել բեռները և կատարել այն ամենը, ինչ չենք կարող անել ինքնուրույն (տես Մատթեոս 11.28–30; Փիլիպպեցիս 4.13; Եթեր 12.27)։

Առնչվող հղումներ. Հովհաննես 3.5; Գործք 3.19–21

Հավատք առ Հիսուս Քրիստոս

Հավատքը «հույս է բաների համար, որոնք տեսանելի չեն, բայց ճշմարիտ են» (Ալմա 32.21; տես նաև Եթեր 12.6)։ Այն պարգև է Աստծուց։

Հավատքը պետք է կենտրոնացած լինի Հիսուս Քրիստոսի շուրջ, որպեսզի տանի մարդուն դեպի փրկություն։ Հիսուս Քրիստոսի հանդեպ հավատք ունենալը նշանակում է ամբողջովին Նրան ապավինելը և վստահելը Նրա անսահման Քավությանը, զորությանը և սիրուն։ Այն ներառում է հավատալը Նրա ուսմունքներին և համոզված լինելը, որ, թեև մենք չենք հասկանում բոլոր բաները, Նա է հասկանում (տես Առակաց 3.5–6; ՎԱՈ 6.36)։

Լինելով ավելին, քան պասիվ համոզմունք, հավատքը արտահայտվում է մեր ապրելաձևով (տես Հակոբոս 2.17–18)։ Հավատքը կարող է աճել, եթե մենք աղոթենք, ուսումնասիրենք սուրբ գրությունները և հնազանդվենք Աստծո պատվիրաններին։

Վերջին Օրերի Սրբերը նաև հավատք ունեն առ Հայր Աստված, Սուրբ Հոգի, քահանայության զորություն և վերականգնված ավետարանի այլ կարևոր երևույթները։ Հավատքը մեզ օգնում է ստանալ հոգևոր և ֆիզիկական ապաքինում, և ուժ՝ առաջ գնալու, մեր դժվարություններին դիմակայելու և գայթակղությունը հաղթահարելու համար (տես 2 Նեփի 31.19–20)։ Տերը մեր կյանքում հզոր հրաշքներ կկատարի համաձայն մեր հավատքի։

Հիսուս Քրիստոսի հանդեպ հավատքի միջոցով անձը կարող է թողություն ստանալ իր մեղքերի համար և, ի վերջո, կարողանալ ապրել Աստծո ներկայության մեջ։

Առնչվող հղում.Մատթեոս 11.28-30

Ապաշխարություն

Ապաշխարությունը մտքի և սրտի փոփոխություն է, որը Աստծո, մեր և աշխարհի մասին նոր տեսակետ է պարգևում մեզ։ Այն ներառում է մեղքերից հրաժարվելը և շրջվելը դեպի Աստված՝ ներման համար։ Այն խթանվում է Աստծո հանդեպ սիրով և Նրա պատվիրաններին հնազանդվելու անկեղծ ցանկությամբ։

Մեր մեղքերը մեզ անմաքուր և անարժան են դարձնում՝ մեր Երկնային Հոր ներկայություն վերադառնալու և այնտեղ բնակվելու համար։ Հիսուս Քրիստոսի Քավության միջոցով մեր Երկնային Հայրը տվել է

մեզ միակ ճանապարհը՝ մեր մեղքերից ներվելու համար (տես Եսայիա 1.18)։

Ապաշխարությունը նաև ներառում է զղջալը մեղք գործելու համար, խոստովանելը Երկնային Հորը և, անհրաժեշտության դեպքում, նաև մյուսներին, հրաժարվել մեղքերից, աշխատել վերականգնել, որքանով որ հնարավոր է, այն վնասը, որն առաջացել է մեղքի հետևանքով, և ապրել, հնազանդվելով Աստծո պատվիրաններին (տես ՎևՈ 58.42–43)։

Առնչվող հղումներ. Եսայիա 53.3–5; Հովհաննես 14.6; 2 Նեփի 25.23, 26; ՎևՈ 18.10–11; ՎևՈ 19.23; ՎևՈ 76.40–41

4. Տնտեսություն, Ուրացություն և Վերականգնում

Տնտեսություն

Տնտեսությունը ժամանակաշրջան է, որի ընթացքում Տերը հայտնի է դարձնում Իր վարդապետությունները, արարողությունները և քահանայությունը։ Այդ ընթացքում Տերը երկրի վրա ունենում է առնվազն մեկ լիազորված ծառա, որը քահանայություն է կրում և ունի աստվածային առաջադրանք՝ տարածելու ավետարանը և սպասավորելու դրա արարողությունները։ Այսօր մենք ապրում ենք վերջին տնտեսության մեջ՝ ժամանակների լրության տնտեսության մեջ, որը սկսվել է Ջոզեֆ Սմիթին ավետարանը հայտնի դարձնելուց հետո։

Նախորդ տնտեսությունները կապված են Ադամի, Ենոքի, Նոյի, Աբրահամի, Մովսեսի և Հիսուս Քրիստոսի հետ։ Բացի դա, եղել են այլ տնտեսություններ, ներառյալ՝ Նեփիացիների և Հարեդացիների մեջ։ Փրկության ծրագիրը և Հիսուս Քրիստոսի ավետարանը հայտնվել և ուսուցանվել են բոլոր տնտեսություններում։

Ուրացություն

Երբ մարդիկ հեռանում են ավետարանի սկզբունքներից և այլևս չեն ունենում քահանայության բանալիները, նրանք գտնվում են ուրացության վիճակում։

Աշխարհի պատմության ընթացքում եղել են ընդհանուր ուրացության ժամանակաշրջաններ։ Մեկ օրինակ է հանդիսանում Մեծ Ուրացությունը, որը տեղի ունեցավ նրանից հետո, երբ Փրկիչը հիմնեց Իր Եկեղեցին (տես Բ Թեսաղոնիկեցիս 2.1–3)։ Փրկչի Առաքյալների մահից հետո ավետարանի սկզբունքները խեղաթյուրվեցին և ոչ լիազորված փոփոխություններ կատարվեցին Եկեղեցու կազմակերպության և քահանայության արարողությունների մեջ։ Այդ համատարած անարդարության պատճառով, Տերը երկրի վրայից վերցրեց քահանայության իշխանությունը և քահանայության բանալիները։

Մեծ Ուրացության ժամանակ մարդիկ մնացին առանց կենդանի մարգարեների կողմից տրվող աստվածային առաջնորդության։ Շատ եկեղեցիներ հիմնվեցին, սակայն դրանք չունեին Սուրբ Հոգու պարգևը շնորհելու կամ քահանայության այլ արարողություններ կատարելու իշխանությունը։ Սուրբ գրությունների շատ մասեր փոփոխվեցին կամ կորան, և մարդիկ այլևս չունեին Աստծո մասին ճշմարիտ գիտելիք։

Ուրացությունը տևեց մինչև այն ժամանակը, երբ Երկնային Հայրը և Նրա Միրեցյալ Որդին հայտնվեցին Ջոզեֆ Սմիթին և մեկնարկեցին ավետարանի լրության Վերականգնումը։

Վերականգնում

Վերականգնումը երկրի վրա Իր զավակների համար Աստծո կողմից Իր ավետարանի ճշմարտությունների և արարողությունների վերահիմնումն է (տես Գործք 3.19–21)։

Վերականգնմանը պատրաստվելիս Տերը առաջ բերեց ազնվազարմ տղամարդկանց և այդ շրջանը կոչվեց Բարեփոխում։ Նրանք փորձեցին վերադարձնել կրոնական վարդապետությունները, սովորույթները և կազմակերպությունը այն ձևով, որը հիմնել էր Փրկիչը։ Սակայն նրանք չունեին քահանայություն և ավետարանի լրիվությունը։

Վերականգնումը սկսվեց 1820 թվականին, երբ Հայր Աստվածը և Նրա Որդին՝ Հիսուս Քրիստոսը, հայտնվեցին Ջոզեֆ Սմիթին՝ ի պատասխան նրա աղոթքի (տես Ջոզեֆ Սմիթ–Պատմություն 1.15–20)։ Վերականգնման կարևոր իրադարձություններից էին Մորմոնի Գրքի թարգմանությունը, Ահարոնյան և Մելքիսեդեկյան Քահանայությունների վերականգնումը և Եկեղեցու կազմակերպումը 1830թ. ապրիլի 6-ին։

Ահարոնյան Քահանայությունը վերականգնվեց, շնորհվելով Ջոզեֆ Սմիթին և Օլիվեր Քաուդերիին Հովհաննես Մկրտչի կողմից 1829թ. մայիսի 15-ին։ Մելքիսեդեկյան Քահանայությունը և արքայության բանալիները վերականգնվեցին 1829թ., երբ Պետրոս, Հակոբոս և Հովհաննես Առաքյալները շնորհեցին դրանք Ջոզեֆ Սմիթին և Օլիվեր Քաուդերիին։

Ավետարանի լրիվությունը վերականգնվեց և այժմ Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցին «միակ ճշմարիտ և կենդանի եկեղեցին է ողջ երկրի երեսի վրա» (ՎևՈ 1.30)։ Եկեղեցին, ի վերջո, կլցնի ամբողջ երկիրը և կհարատևի։

Առնչվող հղումներ. Եսայիա 29.13–14; Եզեկիել 37.15–17; Եփեսացիս 4.11–14; Հակոբոս 1.5–6

5. Մարգարեներ և հայտնություն

Մարգարեն մի անձ է, որը կանչվել է Աստծո կողմից Նրա անունից խոսելու համար (տես Ամովս 3.7)։ Մարգարեները վկայում են Հիսուս Քրիստոսի մասին և ուսուցանում են Նրա ավետարանը։ Նրանք հայտնի են դարձնում Աստծո կամքը և իրական բնավորությունը։ Նրանք քարոզում են մեղքի դեմ և նախազգուշացնում դրա հետևանքների մասին։ Երբեմն, նրանք մարգարեանում են ապագա իրադարձությունների մասին (տես ՎևՈւ 1.37–38)։ Մարգարեների շատ ուսմունքներ գտնվում են սուրբ գրքերում։ Ուսումնասիրելով մարգարեների խոսքերը, մենք կարող ենք սովորել ճշմարտությունը և ուղղություն ստանալ (տես 2 Նեփի 32.3)։

Մենք հաստատում ենք Եկեղեցու Նախագահին որպես մարգարե, տեսանող և հայտնող, և երկրի վրա միակ մարդը, որը հայտնություն է ստանում ողջ Եկեղեցին առաջնորդելու համար։ Մենք նաև հաստատում ենք Առաջին Նախագահության խորհրդականներին և Տասներկու Առաքյալների Քվորումի անդամներին որպես մարգարեներ, տեսանողներ և հայտնողներ։

Հայտնությունը Աստծո հաղորդակցումն է Իր զավակների հետ։ Երբ Տերը հայտնում է Իր կամքը Եկեղեցուն, Նա խոսում է Իր մարգարեի միջոցով։ Սուրբ գրքերը՝ Աստվածաշունչը, Մորմոնի Գիրքը, Վարդապետություն և Ուխտերը, և Թանկագին Մարգարիտը, պարունակում են հնադարյան և վերջին օրերի մարգարեների միջոցով տրված հայտնությունները։ Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու Նախագահը Աստծո մարգարեն է երկրի վրա այսօր։

Անհատները կարող են հայտնություն ստանալ, որը կօգնի իրենց որոշակի կարիքների, պարտականությունների և հարցերի պարագայում, նաև կամրացնի իրենց վկայությունները։ Եկեղեցու ղեկավարներին և անդամներին տրվող հայտնությունների մեծ մասը գալիս են Սուրբ Հոգու կողմից տպավորությունների և մտքերի ձևով։ Սուրբ Հոգին խոսում է մեր մտքում և սրտում ցածր բարակ ձայնով (տես ՎևՈւ 8.2–3)։ Հայտնությունը կարող է նաև գալ տեսիլքների, երազների և հրեշտակների այցելությունների ձևով։

Առնչվող հղումներ. Սաղմոս 119.105; Եփեսացիս 4.11–14; 2 Տիմոթեոս 3.15–17; Հակոբոս 1.5–6; Մորոնի 10.4–5

6. Քահանայություն և քահանայության բանալիներ

Քահանայությունը Աստծո հավերժական զորությունը և իշխանությունն է։ Քահանայության միջոցով Աստված ստեղծել է և ղեկավարում է երկինքը և երկիրը։ Այդ զորությամբ Նա փրկագնում և վեհացնում է Իր զավակներին, իրականացնելով «մարդու անմահությունը և հավերժական կյանքը» (Մովսես 1.39)։

Աստված քահանայության իշխանություն է տալիս Եկեղեցու բոլոր արժանի տղամարդ անդամներին, որպեսզի նրանք կարողանան գործել Նրա անունով՝ Իր զավակների փրկության համար։ Քահանայության բանալիները նախագահելու իրավունքներն են, կամ այն զորությունը, որը տրվում է տղամարդուն Աստծո կողմից երկրի վրա Աստծո արքայությունը ղեկավարելու և առաջնորդելու համար (տես Մատթեոս 16.15–19)։ Այդ բանալիների միջոցով քահանայություն կրողները կարող են լիազորվել քարոզելու ավետարանը և սպասավորելու փրկության արարողությունները։ Բոլորը, ովքեր ծառայում են Եկեղեցում, կանչվում են նրա ղեկավարության տակ, ով կրում է քահանայության բանալիները։ Այդպիսով, նրանք արժանանում են զորությանը, որն անհրաժեշտ է ծառայելու և իրենց կոչումների պարտականությունները կատարելու համար։

Առնչվող հղում.ՎևՈւ 121.36, 41-42

Ահարոնյան Քահանայություն

Ահարոնյան Քահանայությունը հաճախ կոչվում է նախապատրաստական քահանայություն։ Ահարոնյան Քահանայության պաշտոններն են՝ սարկավագ, ուսուցիչ, քահանա և եպիսկոպոս։ Այսօր Եկեղեցում արժանի տղամարդիկ կարող են ստանալ Ահարոնյան Քահանայություն 12 տարեկանից սկսած։

Ահարոնյան Քահանայությունը «կրում է հրեշտակների սպասավորության, ապաշխարության ավետարանի և մեղքերի թողության համար ընկղմամբ մկրտության բանալիները» (ՎևՈւ 13.1)։

Մելքիսեդեկյան Քահանայություն

Մելքիսեդեկյան Քահանայությունը ավելի բարձր, կամ ավելի մեծ քահանայություն է և սպասավորում է հոգևոր բաները (տես ՎևՈւ 107.8)։ Այս ավելի մեծ քահանայությունը տրվել է Ադամին և եղել է երկրի վրա այն ժամանակներում, երբ Տերը հայտնի է դարձրել Իր ավետարանը։

Սկզբում այն կոչվել է «Սուրբ Քահանայություն ըստ Աստծո Որդու Կարգի» (ՎԵՈՒ 107.3)։ Ավելի ուշ այն հայտնի դարձավ որպես Մելքիսեդեկյան Քահանայություն, ստանալով իր անվանումը մեծ քահանայապետի պատվին, որն ապրել է Աբրահամ մարգարեի ժամանակ։

Մելքիսեդեկյան Քահանայության պաշտոնների շարքում են՝ երեցը, քահանայապետը, հայրապետը, Յոթանասունականը և Առաքյալը։ Մելքիսեդեկյան Քահանայության Նախագահը Եկեղեցու Նախագահն է։

Առնչվող հղում.Եփեսացիս 4.11-14

7. Արարողություններ և ուխտեր

Արարողություններ

Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցում արարողությունը սուրբ, պաշտոնական գործողություն է, որը հոգևոր նշանակություն է կրում։ Յուրաքանչյուր արարողություն ստեղծված է Աստծո կողմից՝ հոգևոր ճշմարտություններ ուսուցանելու համար։ Փրկության արարողությունները կատարվում են քահանայության իշխանությամբ և նրանց ղեկավարությամբ, ովքեր կրում են քահանայության բանալիները։ Որոշ արարողություններ էական են մեր վեհացման համար և կոչվում են փրկարար արարողություններ։

Ավետերանի առաջին փրկարար արարողությունը մկրտությունն է՝ ջրի մեջ ընկղմվելով՝ իշխանություն կրող անձի կողմից։ Մկրտությունը անհրաժեշտ է, որպեսզի անձը դառնա Եկեղեցու անդամ և մտնի սելեստիալ արքայություն (տես Հովհաննես 3.5)։

Մկրտություն բառը ծագում է հունարենից և նշանակում է խորասուզվել կամ ընկղմվել։ Ընկղմումը խորհրդանշում է անձի մեղսավոր կյանքի վերջը և նրա վերածնունդը հոգևոր կյանքի, որը նվիրվում է Աստծո և Նրա զավակների ծառայությանը։ Այն նաև խորհրդանշում է մահը և հարությունը։

Նրանից հետո, երբ անձը մկրտվում է, մեկ կամ ավելի թվով Մելքիսեդեկյան Քահանայություն կրողներ դնում են իրենց ձեռքերը նրա գլխին և հաստատում նրան որպես Եկեղեցու անդամ։ Որպես այդ արարողության մաս, որը կոչվում է հաստատում, անձին շնորհվում է Սուրբ Հոգու պարգևը։

Սուրբ Հոգու պարգևը տարբերվում է Սուրբ Հոգու ազդեցությունից։ Մկրտություն չստացած անձը կարող է երբեմն զգալ Սուրբ Հոգու ազդեցությունը և այդ ազդեցության միջոցով ստանալ վկայություն ճշմարտության մասին (տես Մորոնի 10.4–5)։ Սուրբ Հոգու պարգևը ստանալուց հետո անձը իրավունք է ձեռք բերում ունենալու Նրա մշտական ընկերակցությունը, եթե պահում է պատվիրանները։

Փրկարար մյուս արարողություններն են՝ կարգումը Մելքիսեդեկյան Քահանայությանը (տղամարդկանց համար), տաճարային օժտումը և ամուսնության կնքումը (տես ՎԵՈՒ 131.1–4)։ Քահանայության բոլոր փրկարար արարողությունները ուղեկցվում են ուխտերով։ Տաճարում այս փրկարար արարողությունները կարող են կատարվել մահացածների համար՝ փոխարինող անձանց կողմից։ Փոխարինողների կողմից կատարված արարողությունները ուժի մեջ են մտնում միայն այն ժամանակ, երբ մահացած անձն ընդունում է դրանք հոգևոր աշխարհում և պատվում դրանց հետ կապված ուխտերը։

Մյուս արարողությունները, օրինակ՝ հիվանդներին սպասավորելը և երեխաներին անվանակոչելը և օրհնելը, նույնպես կարևոր են մեր հոգևոր զարգացման համար։

Առնչվող հղում.Գործք 2.36-38

Ուխտեր

Ուխտը սուրբ համաձայնագիր է Աստծո և մարդու միջև։ Աստված սահմանում է ուխտի պայմանները, իսկ մենք համաձայնվում ենք անել այն, ինչ Նա խնդրում է մեզանից։ Այնուհետև Աստված խոստանում է մեզ որոշակի օրհնություններ մեր հնազանդության դիմաց (տես ՎԵՈՒ 82.10)։

Քահանայության բոլոր փրկարար արարողությունները ուղեկցվում են ուխտերով։ Մենք ուխտ ենք կապում Տիրոջ հետ մկրտության ժամանակ և նորոգում ենք այդ ուխտը, երբ մասնակցում ենք հաղորդությանը։ Մելքիսեդեկյան Քահանայություն ստացող եղբայրները մտնում են քահանայության երդման և ուխտի մեջ։ Մենք հետագա ուխտեր ենք կապում տաճարում։

Առնչվող հղումներ. Ելից 19.5–6; Սաղմոս 24.3–4; 2 Նեփի 31.19–20; ՎԵՈՒ 25.13

8. Ամուսնություն և ընտանիք

Տղամարդու և կնոջ միջև ամուսնությունը կարգված է Աստծո կողմից, իսկ ընտանիքը կենտրոնական դեր է խաղում փրկության Նրա ծրագրում և մեր երջանկության համար։ Ընտանեկան կյանքի երջանկությունը, առավել հավանական է, ձեռք բերել, երբ այն հիմնված է Տեր Հիսուս Քրիստոսի ուսմունքների վրա։

Որդեծնության սուրբ ուժերը պետք է օգտագործվեն միայն տղամարդու և կնոջ միջև, ովքեր օրինականորեն ամուսնացած են: Ծնողները պետք է բազմանան և լցնեն երկիրը, մեծացնեն իրենց երեխաներին սիրո և արդարության մեջ և ապահովեն նրանց ֆիզիկական և հոգևոր կարիքները:

Ամուսինը և կինը միմյանց սիրելու և միմյանց հանդեպ հոգ տանելու լուրջ պատասխանատվություն են կրում: Հայրերը նախագահում են իրենց ընտանիքներում սիրո և արդարակեցության մեջ և ապահովում կյանքի կարիքները: Մայրերը, հիմնականում, պատասխանատու են իրենց երեխաներին մեծացնելու համար: Այս սուրբ պարտականություններում հայրերը և մայրերը պարտավոր են օգնել միմյանց որպես հավասար գործընկերներ:

Երջանկության աստվածային ծրագիրը հնարավորություն է տալիս, որ ընտանեկան կապերը շարունակվեն գերեզմանից այն կողմ: Երկիրը ստեղծվել է և ավետարանը հայտնի է դարձվել, որպեսզի ընտանիքներ կազմվեն, կնքվեն և հավերժ վեհացվեն (վերցված է՝ «Ընտանիք՝ հայտարարություն աշխարհին», *Ensign,* Nov. 2010, 129, տես նաև LDS.org/topics/family-proclamation):

Առնչվող հղումներ. Ծննդոց 2.24; Սաղմոս 127.3; Մաղաքիա 4.5–6; ՎևՈւ 131.1–4

9. Պատվիրաններ

Պատվիրանները օրենքներ և պահանջներ են, որոնք Աստված տալիս է մարդկությանը: Մենք արտահայտում ենք Նրա հանդեպ մեր սերը, պահելով Նրա պատվիրանները (տես Հովհաննես 14.15): Պատվիրանները պահելը օրհնություններ կբերի Տիրոջից (տես ՎևՈւ 82.10):

Երկու առավել կարևոր պատվիրաններն են՝ «սիրիր Տիրոջը՝ քո Աստծուն քո ողջ սրտով, և քո ողջ հոգով, և քո ողջ մտքով,. . . և . . . սիրիր քո մերձավորին, ինչպես ինքդ քեզ» (Մատթեոս 22.36–39):

Տաս Պատվիրանները ավետարանի կենսական մասն են կազմում և հավերժական սկզբունքներ են իրենցից ներկայացնում, որոնք անհրաժեշտ են մեր վեհացման համար (տես Ելից 20.3–17): Տերը հայտնել է դրանք Մովսեսին հին ժամանակներում, և Նա կրկին սահմանել է դրանք վերջին օրերի հայտնություններում:

Մյուս պատվիրանները ընդգրկում են ամեն օր աղոթելը (տես 2 Նեփի 32.8–9), ավետարանը մյուսներին ուսուցանելը (տես Մատթեոս 28.19–20), մաքրաբարոյության օրենքը պահելը (տես ՎևՈւ 46.33), լրիվ տասանորդ վճարելը (տես Մաղաքիա 3.8–10), ծոմ պահելը (տես Եսայիա 58.6–7), մյուսներին ներելը (տես ՎևՈւ 64.9–11), երախտագիտության զգացում ունենալը (տես ՎևՈւ 78.19), և Իմաստության Խոսքը պահելը (տես ՎևՈւ 89.18–21):

Առնչվող հղումներ. Ծննդոց 39.9; Եսայիա 58.13–14; 1 Նեփի 3.7; Մոսիա 4.30; Ալմա 37.35; Ալմա 39.9; ՎևՈւ 18.15–16; ՎևՈւ 88.124

Այս թեմաների վերաբերյալ լրացուցիչ տեղեկության համար այցելեք LDS.org, Teachings, Gospel Topics, կամ տես *Հավատքին հավատարին. Ավետարանական վկայակոչում* (2004):

© 2009, 2013 by Intellectual Reserve, Inc. Բոլոր իրավունքները պաշտպանված են: Անգլերենի հաստատումը. 10/12: Թարգմանության հաստատումը. 10/12: *Basic Doctrines*-ի թարգմանությունը: Armenian. PD00010275 201